



ՄԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ ԱՐԾՐՈՒՆ ԳԱԼԻԿՅԱՆԻ

Վախճանվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրյալ գործիչ, ճարտարապետ Արծրուն Գալիկյանը: Նա ծնվել է Վան քաղաքում, արհեստավորի ընտանիքում, 1912 թ. սեպտեմբերի 8-ին: Նայոց Մեծ եղեռնից հետո նրանց ընտանիքը վերահաստատվել է Երևանում: Այսպես է նա միջնակարգ կրթություն ստացել, զուգահեռաբար ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանը: 1937 թ. գերագանց դիպլոմով ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետության բաժինը:

Ծանր ու դժվարին է եղել Արծրուն Գալիկյանի կյանքի ուղին: Երկրորդ աշխարհամարտի սկզբից գորակոչվել է բանակ, մասնակցել դաժան մարտերի, գերի ընկել, փառապել գերմանական ճամբարներում: Վերադառնալով Երևան, «Նայրենիքի դավաճանի» սրահող մեղադրանքով ձերբակալվել է ու քստրովկ հյուսիսային հեռավոր Նորիսկ քաղաք: Այնպես էին քստրոված նաև իր ուսուցիչներ Միքայել Մազմանյանն ու Գևորգ Քոչարը: Մասնագիտությամբ աշխատելով նրանց ճարտարապետական արվեստանոցում, օգնել է իր ուսուցիչներին՝ մասնակցելով նրանց նախագծերի կատարմանը, ինչպես նաև հանդես է եկել որպես ինքնուրույն նախագծող: Նրա նախագծերով են կառուցվել Նորիսկի վարչակենցաղային կոմբինատն ու կենտրոնական էլեկտրակայանը:

Աքսորից ազատվելով, 1956-ին վերադառնում է Երևան ու աշխատանքի անցնում «Նայարդնախագիծ» ինստիտուտում: Նաջորդ փարի, երջանկահիշարակ Վազգեն Առաջինի հրավերով, ստանձնում է Ս. Էջմիածնի ճարտարապետի պաշտոնն ու դառնում Մայր Աթոռի 1956 թ. ստեղծված ճարտարապետական հանձնաժողովի անդամ: Իր պարտականությունները ճարտարապետ Արծրուն Գալիկյանը կատարել է նվիրումով, պարասխանապրկության բարձր զգացումով ու մասնագիտական հմուտ կարողությամբ: Իր նախագծերով Երևանում կառուցվել են հասարոցաշինական փարբեր գործարանների հավաքման արտադրամասերը, Ուռուցքաբանական դիսպանսերի համալիրը Քանաքեռում, փպարանների շենքեր Երևանում և Վանաձորում:

Ճարտարապետ Արծրուն Գալիկյանը բարի հիշատակ է թողել հարկապես Ս. Էջմիածնում: Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետի պաշտոնը վարելիս՝ իր նախագծերով են կառուցվել Մայրավանքի արևելյան և հյուսիսային պարիսպների դարպասները, այդ թվում և «Ժամացույցի աշտարակ» անվանվող դարպասը, Մալիշկայի Ս. Աննա և Վայքի Ս. Տըր-դար եկեղեցիները, Արարաբյան հայրապետական թեմի Առաջնորդարանի շենքը, Գևորգյան Նոգևոր Ճեմարանի սաների հանրակացարանը, Գեղարդավանքի վանատունը: Իր նախագծով ու անմիջական ղեկավարությամբ է իրականացվել Նոր Վեհարանի շենքի արմավական վերանորոգումն ու բարեգարդումը, Ս. Գայանե վանքի մարտադարունը, աղբյուրը և այլ կառույցներ, զուգահեռաբար գործուն մասնակցություն է ունեցել Գեղարդավանքի և հոր Վիրապի համալիրների նորոգման ու վանքապարածությունների բարեկարգման աշխատանքներին:

Նայրենասեր, բարեխիղճ, գործունյա ու բարեկիրթ ճարտարապետ Արծրուն Գալիկյանի հիշատակը չի խամրի, կապրի իր գործերի հետ:

ՎԱՐԱՋԴԱՏ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ճարտարապետ, ՏՏ Գիտությունների
Ազգային Ակադեմիայի իսկական անդամ